

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՌԻՆԱՄՈՒՆՈՅԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՐԶԱԿԸ

Ժ.01.07-«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, դոցենտ
ԱՐԱ ՀՐԱԶԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
ԿԱՐԼԵՆ ՌԱՖԱՅԵԼԻ ՄԱՏԻՆՅԱՆ

բանասիրական գիտությունների
թեկնածու, պրոֆեսոր
ՆԱՏԱԼՅԱ ՄԻՔԱՅԵԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Հայ-ռուսական /սլավոնական/
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հունիսի 10-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ
ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի
Հայ և արտասահմանյան գրականության 003 մասնագիտական խորհրդում
(հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Ա. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. մայիսի 6-ին

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների թեկնածու՝

Ս. Ա. Մարգարյան

Աշխատանքը նվիրված է 20-րդ դարի իսպանացի նշանավոր գրող-փիլիսոփա Միգել դե Ունամունոյի փիլիսոփայական արձակի քննությանը: Ունամունոն ոչ միայն փիլիսոփա-գրող է, այլև քաղաքական և հասարակական գործիչ, հրապարակախոս, որի ստեղծագործական գործունեությունը չափազանց բազմազան է. փիլիսոփայական էսսե, վեպ, նիվոլա (փիլիսոփայական վեպ) քննադատական հոդվածներ, հուշագրություններ, օրագրեր, հրապարակախոսական ելույթներ: Ատենախոսության մեջ փորձ է արվում վերհանել Ունամունո փիլիսոփա-գրողի արձակի, մասնավորապես՝ «նիվոլայի», իբրև փիլիսոփայական վեպի առանձնահատկությունները՝ հիմնվելով էքզիստենցիալ կամ «գոյության փիլիսոփայության» վրա, իհարկե, հաշվի առնելով տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական, փիլիսոփայական և գիտամշակութային իրադրությունները:

Ունամունոյի փիլիսոփայական արձակի համապարփակ վերլուծության համար փորձ է արվել ուսումնասիրությունը տանել հիմնական հարցադրումների միջոցով՝ ինչպես է գրում, ինչ միջոցներով է գրում, և ինչ է գրում, այսինքն՝ հավասարապես ուշադրություն է դարձվել ուսումնասիրվող նյութի և ձևին, և՛ բովանդակությանը:

Աշխատանքում, ըստ անհրաժեշտության, տեղ են գտել նաև որոշ կենսագրական մանրամասներ, փոքրիկ դրվագներ, հիշատակություններ՝ ընկերների հետ ունեցած նամակագրությունից, անձնական օրագրերից, քանի որ գրողի իրական կյանքի բազմաթիվ իրադարձություններ հիմք են դարձել մի շարք ստեղծագործությունների համար: Փորձ է արվել էլ ավելի խորացնել և զարգացնել որոշ դրույթներ, որոնք նշված են Ունամունոյին նվիրված հետազոտական այլ աշխատանքներում, սակայն խորապես ուսումնասիրված չեն, ինչպես օրինակ՝ երազի և մառախուղի սիմվոլներն իբրև գոյության փիլիսոփայության հիմք: Ունամունոյի՝ մահվան ընկալումն այլևս չի մեկնաբանվում իբրև վախճան, ինչպես սովորաբար նշվում է այլ ուսումնասիրություններում, այլ մի նոր կյանքի սկիզբ:

Փորձ է արվել ցույց տալ Միգել դե Ունամունոյի փիլիսոփայական արձակի և էքզիստենցիալիզմի ընդհանրական առանձնահատկությունները, որոնց հիշատակությունները տեղ են գտել իսպանացի մի շարք գրականագետների և գրաքննադատների աշխատություններում և հոդվածներում, և իհարկե անձամբ գրողի հուշագրերում, քանզի վերջինս համոզված է, որ իրենից լավ ոչ ոք չի կարող գրել իր և իր ստեղծագործությունների մասին:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միգել դե Ունամունոյի փիլիսոփայական արձակի ուսումնասիրությանը հայ քննադատական միտքն առհասարակ չի անդրադարձել: Այս իմաստով ատենախոսության թեմայի ընտրությունը կարելի է համարել արդիական: Առաջին անգամ հայ ընթերցողին հնարավորություն է տրվում ծանոթանալ Միգել դե Ունամունոյի ստեղծագործության, մասնավորապես՝ փիլիսոփայական արձակի՝ էսսեների, վեպերի, նիվոլաների տեսական և գաղափարական հանգամանակից վերլուծությանը, որի շնորհիվ, փաստորեն, ամբողջանում է իսպանալեզու փիլիսոփայական վեպի մասին պատկերացումների համակարգը, ըստ այդմ էլ՝ գրողի ստեղծագործությունների վերլուծությունը շարունակում է արդիական մնալ նաև նորագույն ժամանակների համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխատանքը նվիրված է 20-րդ դարի իսպանացի հայտնի գրող-փիլիսոփա Միգել դե Ունամունոյի փիլիսոփայական արձակի ուսումնասիրությանը: Ատենախոսության խնդիրն է՝ վերհանել Ունամունո փիլիսոփա-գրողի արձակի, մասնավորապես՝ «նիվոլայի», իբրև փիլիսոփայական վեպի առանձնահատկությունները՝ հիմնվելով էքզիստենցիալ կամ «գոյության փիլիսոփայության» վրա, հաշվի առնելով տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական, փիլիսոփայական և գիտամշակութային իրադրությունները:

Ուսումնասիրության մեջ մանրամասն դիտարկվում են Միգել դե Ունամունոյի փիլիսոփայական և գեղագիտական ըմբռումները, գրողի ստեղծագործական կյանքի առանձնահատկությունները՝ ուսումնասիրության հիմնական նյութ համարելով նրա արձակ ստեղծագործությունները՝ էսսեները, նիվոլաները և վեպերը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Միգել դե Ունամունոյի ստեղծագործությունների վերաբերյալ տարբեր ուսումնասիրություններ կարելի է գտնել ինչպես ռուսական, այնպես էլ արտասահմանյան գրականագիտության մեջ: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ տվյալ ուսումնասիրությունն իրականացվել է՝ իբրև հիմք ընդունելով իսպանալեզու հեղինակների աշխատություններն ու հոդվածները, քանի որ կարևորել ենք բնագիր տեքստերի առավել ստույգ և տեղեկություններով հարուստ լինելու հանգամանքը: Ունամունոյի փիլիսոփայական արձակի վերաբերյալ գրվել են հոդվածներ, գրախոսություններ, մենագրություններ, մեծ թվով թեզեր և

ատենախոսություններ: Գրողի ստեղծագործության ուսումնասիրությանն անդրադարձել են արտասահմանյան և ռուս գրականագետներ Խ. Ա. դե Կաստրոն, Խ. Մարիասը, Խ. Լոպեսը, Ս. Բենիտոն, Ա. Կայուելան, Ա. Պարամոն, Կ. Ֆրանկոն, Ա. Առատիան, Մ. Սեյդեմենը, Է. Ջոնսը, Ջ. Գայոն, Խ. Գ. Մորեխոն, Վ. Նեստերովան, Ք. Իգորնևան և այլք: Աշխատության գիտական նորությունները գրեթե հավասարաչափ բաշխված են երեք գլուխներում, որոնցում փորձ է արվել բազմակողմանիորեն և հետևողականորեն ուսումնասիրել Ուսամուսնոյի փիլիսոփայական և գեղագիտական կոնցեպտները, դրանց գաղափարական առանձնահատկությունների զարգացմանը հետևել գրողի փիլիսոփայական էսսեներում, այնուհետև՝ նիվոլաներում և վեպերում:

ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տվյալ ուսումնասիրությունն իրականացվել է գրականագիտության արդի մեթոդներով: Հիմնականում կիրառվել է գրականագիտական վերլուծության համադրական մեթոդը, որի մեջ առկա են ինչպես ընդհանուր բանասիրական հետազոտության, այնպես էլ համեմատական գրականագիտության տարրեր: Ստեղծագործությունների մեջբերված թարգմանությունները մերն են:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը կարող է հետաքրքրել և օգտակար լինել բանասիրական ֆակուլտետի ուսանողների, հատկապես՝ իսպանական գրականություն և գրականագիտություն ուսումնասիրողների համար:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնում:

Ատենախոսության հիմնադրությունները հրապարակվել են ԲՈՀ-ի կողմից ընդունելի ամսագրերում և պարբերականներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատանքը կառուցված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ քննության են առնվել և ներկայացվել թեմայի մշակվածությունը, մեթոդաբանությունը, արդիականության և հետազոտության խնդիրները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

**ՄԻԳԵԼ ԴԵ ՈՒՆԱՄՈՒՆՈՅԻ ԳՐԱԿԱՆ-ՓԻԼԻՍՈՓԱՑԱԿԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

1.1. ՄԻԳԵԼ ԴԵ ՈՒՆԱՄՈՒՆՈՅԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԷՔԶԻՍԵՆՑԻԱԼԻԶՄԸ

Ունամունո փիլիսոփա-գրողի մտածողությունը ձևավորվում է մի ժամանակաշրջանում, որն Իսպանիայում անվանում են «դարի ճգնաժամ»՝ աշխարհաքաղաքական և ազգային խնդիրներ, երկրում իշխող բացարձակ անարխիա, քաղաքական անկայունություն, խարխիվում է երկրի ոչ միայն քաղաքական, այլև մշակութային կյանքը: Տարածում է գտնում «98-ի ճգնաժամ» անվանումը, որն իր հերթին ծնունդ է տալիս «98-ի կամ աղետի սերնդ»-ի ձևավորմանը, որի շրջանակներում ստեղծագործում են գրողներ, փիլիսոփաներ նրանց թվում նաև՝ Միգել դե Ունամունոն:

Իսպանացի փիլիսոփա, գրականագետ Խուլիան Մարիասը գրում է. «Դարի ճգնաժամ» իսպանական գրական դաշտում առաջ բերեց այն, ինչ կոչվում է գրական էքզիստենցիալիզմ, չնայած սկզբնական, նոր-նոր ձևավորվող այդ ֆենոմենը դեռևս չէր կարելի էքզիստենցիալիզմ անվանել, քանի որ խոսքը մի գրականության մասին է, որտեղ գերիշխում էին էքզիստենցիալիզմին հատուկ անհանգիստ մտքեր և գաղափարներ, սակայն բուն էքզիստենցիալիզմը որպես փիլիսոփայական ուղղություն, ի սկզբանե սկսում է զարգանալ xx դարի 30-40-ական թվականներին, ներկայացուցիչներն են՝ Մարտին Հայդեգերը՝ Գերմանիայում, Ժան Պոլ Սարտրը, Ալբեր Կամյուն՝ Ֆրանսիայում, հետո միայն եվրոպական մյուս երկրներում՝ Իսպանիայում՝ Միգել դե Ունամունոն, Խոսե Օրտեգա ի Գասսետը, Ռուսաստանում՝ Լև Շեստովը, մինչդեռ մարդու գոյության խնդիրներ արծարծող գրականությունն ավելի վաղ էր ձևավորվել, իսկ էքզիստենցիալիզմի հիմքը դնում է դանիացի փիլիսոփա Սյորեն Կյերկեգորը»¹:

Իսպանիայում էքզիստենցիալիզմի հիմնադիրն է Միգել դե Ունամունոն, որի մտածողության վրա մեծապես ազդել է Կյերկեգորը: Այս երկու էքզիստենցիալիստներին միավորում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ էքզիստենցիան, Աստված, մեղքը, անձկությունը կամ հոգսը, անմահության, հավատի և ճշմարտության մասին գաղափարները²:

¹ Marías, J., El existencialismo como filosofía, Madrid, 1999, p.1-8.

² García, F., Miguel de Unamuno, Diario íntimo, Madrid, 1970, p. 412.

Հստ Խուլիան Մարիասի՝ Ունամունտն չունի փիլիսոփայական համակարգ, նրա փիլիսոփայական ձևակերպումները և հիմնավորումները դուրս են գալիս իրենց սահմաններից, հակադրվում իրար, դրանցից յուրաքանչյուրը անջատ է մյուսներից, հակասական, այդ է պատճառը, որ նրա փիլիսոփայությունը մեկ բառով կարելի է անվանել «հակասությունների փիլիսոփայություն»:

Ունամունտն փիլիսոփայությունը մեկնաբանում է որպես կենսական անհրաժեշտ ֆունկցիա, որովհետև մարդուն պետք է հիմնավորել սեփական գոյությունը: Մարդը չի կարող հենց այնպես ապրել, նա պետք է իմաստ, նպատակ փնտրի: Եթե մարդը փիլիսոփայում է ապրելու համար, իսկ փիլիսոփայության օբյեկտը և բարձրագույն սուբյեկտը մարդն է, նշանակում է՝ մարդը փիլիսոփայում է իր մասին և իր խնդիրների շուրջ, հետևաբար փիլիսոփայության մեջ ոչ մի դեպքում չի կարելի խոսել վերացական մարդու մասին, այստեղից էլ՝ «մսից և ոսկորից» մարդու գաղափարը, որը հավանաբար Ունամունտն վերցնում է Կլերկեգորից, վերջինս խոսում է մասնավոր կամ կոնկրետ մարդու մասին:

Սեփական էքզիստենցիան ճանաչելու և հավատալու համար Ունամունտն առաջարկում է հիմնվել կրոնի, հավատի վրա, որի արդյունքում Ունամունտյի փիլիսոփայությունը բնորոշվում է իբրև կրոնական:

Էքզիստենցիան մղում է պայքարի, առաջ է գալիս բանականության և հավատի, մտքի և սրտի հակադրությունը և վախ՝ անհայտի, մահվան նկատմամբ: Հստ Ունամունտյի՝ պետք է ձգտել որքան հնարավոր է համերաշխ պահել սիրտն ու միտքը, զգացմունքն ու բանականությունը, մի բան, որ հեշտ չէ, ողբերգությունը վրա է հասնում այն ժամանակ, երբ փորձում են այդ երկուսին միավորել, այսինքն՝ միավորել անմիավորելին: Բանականությունը վերլուծում է, սիրտը՝ ցանկանում, մշտնջենական պայքարի մեջ մեկը փորձում է լռեցնել մյուսին: Անդրադառնալով էքզիստենցիալիզմի կարևորագույն խնդիրներից մեկին՝ *կյանքի իմաստի* պրոբլեմին, Ունամունտն սկսում է մի փիլիսոփայություն, որը կենտրոնացնում է զգացմունքի կամ զգացման վրա:

«Մարդկանց և ժողովուրդների՝ կյանքի հանդեպ ողբերգական զգացումը» կրոնափիլիսոփայական էսսեն Ունամունտն կառուցում է ապրելու և ճանաչելու, մեռնելու և անմահություն գտնելու, ռացիոնալի և զգայականի հակադրությունների հիման վրա: Մարդը գտնվում է աշխարհի թատրոնում, որն իրենից ներկայացնում է գոյության տրագիկոմեդիա, և ահա մարդը խնդիր ունի որոշելու իր տեղն ու դերն այդ թատրոնում: Ողբերգական է մարդու ճակատագիրը, ամբողջ կյանքի ընթացքում նա տառապում է ռացիոնալիզմի և իռացիոնալիզմի ընտրության միջև, ձգտում է ազատվել դրանից, որպեսզի խաղաղություն և մխիթարանք գտնի հավատի մեջ, սակայն հասկանում է, որ անհնար է ապրել առանց բանականության:

Ունամունո-Կյերկեգոր մտածողների համար էքզիստենցիան հիմնավորվում, իմաստավորվում է կրոնական էքզիստենցիայով, այսինքն՝ լինել, գոյություն ունենալ Աստծու առաջ, որը նշանակում է՝ նրան մոտ լինել՝ սրտով, հոգով, մտքով: Ունամունոն իսկապե՞ս հավատում էր. դժվար է ասել, քանի որ նրա հավատը հակասական է, նա հավատում էր՝ կասկածելով, քանի որ ըստ նրա հավատը, որ կասկածի տակ չի դրվում, հավատ չէ: Ունամունոն հավատու՞մ էր Քրիստոսի աստվածային լինելուն, հստակ չէ, սակայն հաստատ է մի բան, այն, որ Ունամունոյի Քրիստոսն իսպանացի է, այս մասին գրում է. «Իսպանականությունը կամ իսպանացի լինելն իմ կրոնն է, Աստվածը, որին ցանկանում եմ հավատալ՝ Երկնային Հավերժական Իսպանիան է, հետևաբար իմ Աստվածն իսպանացի է, նա Դոն Կիխոտի Աստվածն է, Աստված, որ մտածում է իսպաներեն, և հենց իսպաներեն էր, որ ասաց. «Թող լինի լույսը, Բանը նույնպես իսպաներեն եղավ»³:

Ի՞նչ է հավատքը և ինչո՞վ է տարբերվում հավատից: Հավատքը, ինչպես և հավատը, անհրաժեշտություն է: Բայց եթե հավատքը վերաբերում է կրոնին, ապա հավատն առավել կարևոր է, որովհետև մարդը կարիք ունի հավատալու: Ունամունոն սահմանում է հավատի երեք կատեգորիա.

1. Հավատալ, նշանակում է՝ հավատալ նրան, ինչին հավատում ենք
2. Հավատալ, նշանակում է՝ ստեղծել, արարել այն, ինչը չենք տեսնում
3. Հավատալ, նշանակում է՝ ցանկանալ հավատալ:

Հավատի, հավատքի և կրոնի գաղափարներն Ունամունոն զարգացնում է «Իմ կրոնը» էսսեում (1907), որտեղ գրում է. «Իմ կրոնն է՝ կյանքի մեջ փնտրել ճշմարտությունը, և կյանքը՝ ճշմարտության մեջ... Նույնիսկ չկարողանալով ճանաչել անճանաչելին՝ միևնույն է, ես հավատում եմ, որ հասնելու եմ ճանաչողության, ինչը նշանակում է՝ ճանաչել Քրիստոսին, այդ է իմ բարձրագույն նպատակը իբրև մարդ»⁴:

«Ավետարանական մտորումներ» էսսեում Ունամունոն անդրադառնում է մահվան և ոչնչի գաղափարներին. «Ի՞նչ է մահը, մի՞թե հասարակության համար մեզնից յուրաքանչյուրի մահը պարզապես ինչ-որ դեպք չէ և ոչ ավելին: Ես կմեռնեմ, իսկ մյուսները կշարունակեն ապրել իրենց կյանքը: Այո՛, և յուրաքանչյուր ոք կմեռնի, երբ վրա հասնի իր մահվան ժամը, կմեռնենք բոլորս, քանի որ մարդն ուրվականի պես հայտնվում է ոչնչից և գնում դեպի ոչինչը»⁵:

«Երեք էսսեում» Ունամունոն մտորում է անհատի հավատի, հոգևոր և ռացիոնալ աշխարհների, այսինքն՝ բանականություն-հավատ

³ Ունամունո, Միգել դե., Մառախուղը, Երևան, 2013, էջ 213:

⁴ Նույն տեղում, էջ 16:

⁵ Robles, L., El Mal del Siglo, Salamanca, 1999, p. 99-131.

հակադրության բախման շուրջ: Ըստ գրողի՝ միակ բանը, որի հետ բացարձակապես անհնար է համադրել հավատը՝ բանականությունն է:

«Քրիստոնեության հոգեվարքը» էսսեն լի է ավետարանական մեջբերումներով, ըստ Ունամունոյի՝ վերջինս կարող է համարվել կրոնական թեմայով գրված իր ամենամեծ ստեղծագործությունը, որի հիմքում՝ հոգեվարքն է, ավելի ճիշտ՝ պայքարը: Այն հարցին, թե ի՞նչ է հոգեվարքը, Ունամունոն պատասխանում է. «Հոգեվարք, նշանակում է պայքար: Հոգեվարք է ապրում նա, ով ապրում է պայքարի մեջ, ով պայքարում է հենց կյանքի դեմ, մահվան դեմ», - այսպես է ասվում Սուրբ Թերեզային ուղղված աղոթքում. «Մեռնում եմ, որովհետև չեմ մեռնում...»⁶:

1.2. ԿԻՒՈՏԻԶՄԸ Ի ԲՐՆ ԻՍՊԱՆԱՑԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՆՈՐ ԿՐՈՆ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Ունամունոյի կրոնափիլիսոփայական համակարգում առանձնանում է «կիիստիզմ» հասկացությունը՝ իբրև իսպանացի ժողովրդի կրոն, հավատ կամ հավատք, որը, ըստ Ունամունոյի մի ամբողջ ժողովրդի ազգային կրոն պիտի դառնար:

Ամենից առաջ պետք է անդրադառնալ «կիիստիզմի» առաջացման պատճառներին: 1898 թվականը Իսպանիայի համար համարվում է աղետալի ժամանակաշրջան: Պատճառները բազմազան են. 1898 թվ. ԱՄՆ-ի հետ պատերազմում կորցրած գաղութներ, տնտեսական ճգնաժամ, կաշառակերություն, միապետության տապալում, արդյունաբերության և առևտրի կտրուկ անկում, որոշ մարզերի ծայրաստիճան չքավորություն, մասայական անգրագիտություն և այլն: «98-ի սերնդի» գրողները փորձում են իսպանացի ժողովրդին դուրս բերել հուսահատությունից, մշակույթը՝ խավարից: Ունամունոն խորը ցավով հայտարարում է. «*Me duele la España*»⁷, (Իմ ներսում ցավում է Իսպանիան): Իսպանիայի փրկության տարբերակներից մեկը՝ եվրոպականացումն է, մոդեռնի գաղափարը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ անհրաժեշտ է կոտրել Իսպանիայի և Եվրոպայի միջև դրված սահմանները, դուրս գալ մեկուսացումից: Եթե Օրտեգա ի Գասսետն ընդունում է մոդեռնը, ապա Ունամունոն նահանջում է, միայն մեկ դեպքում է համաձայնում Օրտեգայի հետ, այն է՝ եվրոպականությունը չպետք է «գերեվարի» իսպանական ոգին, այլ նոր շունչ հաղորդի իսպանացի մտավորականների մտածողությանը: Ըստ Ունամունոյի, եթե իրականում անհրաժեշտություն կա հայացք ուղղելու արտաքին աշխարհին, ապա ավելի լավ է նայել Աֆրիկային, քան Եվրոպային, և

⁶ Orringer R, Nelson, Pascal, Portavoz de Unamuno y clave de la Agonía del Cristianismo, New York, 2006, p. 35-39.

⁷ Humboldt de, G., Cuatro ensayos sobre España y América, versiones y estudios por Miguel de Unamuno y Justo Gárate, Madrid, 1951, p. 210.

ընդհանրապես, Սուրբ Թերեզայի խոսքերն ավելին արժեն, քան «Զուտ բանականության քննադատությունը»⁸:

Իբրև բացառիկ հայրենասեր և գրող, Ունամունոն որոշում է, ինչպես ինքն է նշում, որևէ «խելամիտ խելագարությամբ» վարակել սեփական ժողովրդին, որն էլ իրականություն է դառնում Դոն Կիխոտի և Սանչո Պանսայի կերպարների շնորհիվ, որոնց մեջ, բնականաբար, Ունամունոն գերապատվությունը տալիս է Դոն Կիխոտին, իսկ նրա անունից այդ նորաստեղծ կրոնը կոչվում է *կիխոտիզմ*:

Ունամունոն ամբողջացնում է կիխոտիզմի գաղափարը «Դոն Կիխոտի և Սանչոյի կյանքը» փիլիսոփայական էսսեում (1905), ահա թե ինչ է գրում. «Արդյոք գոյություն ունի՞ իսպանական փիլիսոփայություն: Այո՛, գոյություն ունի, և այն՝ Դոն Կիխոտի, Դուլսինայի՝ չմեռնելու, հավատալու, ճշմարտություն արարելու փիլիսոփայությունն է»⁹: Ունամունոն Դոն Կիխոտին համարում է Քրիստոս, Դոն Կիխոտի մասին գիրքը՝ Աստվածաշունչ, իսկ նրա հանդեպ հավատը՝ կիխոտիզմ, որը պետք է նոր կրոն դառնար իսպանացիների համար:

Ունամունոյի համար Դոն Կիխոտի աշխարհը հեռանում է ասպետականության մասին գրքերից, գուցե նրա գործողությունները և կյանքը պատկանում են տվյալ ժամանակին, սակայն նրա իդեալները և գաղափարները հավերժական են և համամարդկային:

Կիխոտիզմն ի վերջո չդարձավ ազգային կրոն, սակայն իր լայն և բազմաբովանդակ գաղափարախոսությամբ կարողացավ դիմակայել ժամանակին և պահպանել իր արդիականությունը նաև գալիք սերունդների համար:

1.3. ԱՐՎԵՍՏԻ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ինչպես փիլիսոփայության մեջ, այնպես էլ՝ արվեստում, Ունամունոյին հետաքրքրում է միայն տառապալո մարդը, արվեստն օգնում է մարդուն գիտակցել և ընդունել դիմացինի ողբերգությունն ու ցավը: Արվեստի ձևերի մեջ գրողը նախապատվությունը տալիս է գեղանկարչությանը, ֆիգուրատիվ արվեստին, շեշտադրում պեյզաժի գեղեցկությունը: Արվեստի առաջնային գործառնությոը մարդուն բնության գեղեցկությանը մոտեցնելն է, այսինքն՝ արվեստը սովորեցնում է տեսնել գեղեցիկը:

Իսպանական *գեղանկարչության* մեջ Ունամունոն առանձնացնում է Վելասկեսին, Գոյային, Էլ Գրեկոյին, նրանց համարում իսպանական գեղարվեստի հիմնադիրներ: Գրողն առանձնացնում է «մաքուր ճարտարապետություն» հասկացությունը, որում միահյուսվում են մաքուր

⁸ Unamuno de, M., Dos artículos y dos discursos, Madrid, 1930, p. 23.

⁹ Unamuno de, M., Vida de Don Quijote y Sancho según Miguel de Cervantes Saavedra, Madrid, 1914, p. 35.

քանդակագործությունը և գեղանկարչությունը: Ճարտարապետության մեջ Ունամունոն նախապատվությունը տալիս է պարզությանն ու թեթևությանը, քանի որ հսկա չափերի մեջ չէ շքեղությունը: Լավ ճարտարապետներին անվանում է արվեստագետներ՝ նրանց դասակարգելով երկու խմբի՝ *բարձր կարգի* ճարտարապետներ, որոնք ճարտարապետական բարդագույն մտահղացումների և լուծումների հեղինակ են և *երկրորդ կարգի* ճարտարապետներ, որոնք կյանքի են կոչում վերջիններիս գաղափարները: Ունամունոն մշտապես փնտրել է կատարյալ *գեղեցկությունը*, քանի որ հավատի և բարու կորստից հետո իբրև կյանքի բարձրագույն իդեալ մարդուն մնում է միայն գեղեցկությունը:

Ինչ վերաբերում է *երաժշտությանը*, ապա Ունամունոն վերջինիս անդրադառնում է բացառապես պոեզիայի առնչությամբ, քանզի համոզված է, որ այն, ինչ երաժշտություն չէ, պոեզիա է: Ունամունոն չի ընդունում մոդեռնիզմի երաժշտականությունը, ոչ էլ սիմֆոնիստների՝ նոտաների սիմֆոնիկ նշանակության գերօգտագործումը: Տարբերակում է դնում ներքին և արտաքին երաժշտությունների միջև: Ներքին երաժշտությունը ծնվում է տիեզերքի և մարդու ներդաշնակությունից, իսկ արտաքինը՝ սոսկ ձև է՝ առանց էության՝ փակված կաղապարի մեջ: Ունամունոն երաժշտությունը նույնացնում է նաև պեյզաժի հետ, քանի որ դրանց միջոցով կարելի է հասնել երազներին, իդեալներին, անմատչելիին, ենթագիտակցականին: Արվեստում Ունամունոն ուշադրություն է դարձնում լեզվին՝ վերջինս բնորոշելով իբրև մշակութային գործիք՝ կիրառելի միայն տղամարդկանց համար, իսկ ահա կնոջ համար «տղամարդկային» այդ գործիքն օգտագործելը նույն է, ինչ տաբատ հագնելը, իհարկե կինը և խոսում է լեզվով, և տաբատ հագնում, սակայն երկու դեպքում էլ աչքի չի ընկնում, ահա թե ինչու լավագույն փիլիսոփաները, պոետները, առհասարակ արվեստագետները տղամարդիկ են, իսկ կանայք փայլում են անձնական նամակներ գրելու գործում, գուցե որովհետև դրանցում լեզուն և ոճը խիստ տնային են, կանացի¹⁰:

«Հավերժական արվեստի» մասին կարելի է խոսել, երբ վերջինս, գերծ մնալով նորաձև համարվող արհեստական ձևերից, քայլում է ժամանակի միջով և մնում պատմության մեջ իբրև հավերժության սիմվոլ, որպես այդպիսին՝ գրողն առաջ է քաշում իսպանական թատրոնը, քանզի այն ապրում է ժողովրդի ներաշխարհում, իսկ ժողովուրդն ապրում է պատմական միջարկության մեջ: Թատրոնում գրողը բոլոր ժանրերից վեր է դասում ողբերգությունը, սրանով է բացատրվում նաև Ունամունոյի պիեսների ուղղվածությունը դեպի անտիկ ողբերգություն՝ «Ֆեդրա», «Մեդեա»: Ունամունոն հիացմունքով է խոսում Շեքսպիրի մասին նաև Լոպե դե Վեգայի, չնայած՝ չի ընդունում վերջինիս՝ հանդիսատեսի ճաշակին տուրք տալու հնազանդությունը:

¹⁰ Unamuno de, M., Ramplonería, Madrid, 2005, p. 18.

«Ազգայնապաշտության շուրջ» էսսեում Ունամունոն զարգացնում է պատմական միջարկության՝ «intrahistoria»-ի գաղափարը: Մրանով Ունամունոն մոտենում է ավանդույթի, ընդհանրապես՝ ավանդության հավերժության գաղափարին, որը բնորոշվում է «Ժամանակը՝ ժամանակի մեջ» գաղափարով: Ունամունոն անդրադառնում է նաև «փնտրափիլիսոփայություն» հասկացությանը, իսկ այն հարցին, թե հատկապես ո՞ր իմաստով է օգտագործում «intra» նախածանցը, գրողը պատասխանում է. «Ցանկացած բան ունի իր ներքին բովանդակությունը կամ նշանակությունը, ներաշխարհը, այդ թվում նաև գիտությունը»¹¹:

Ըստ Ունամունոյի՝ ամենից առաջ պետք է ճանաչել Իսպանիան, ընդ որում՝ ճանաչել աստվածաշնչյան իմաստով, որի վառ ապացույցը՝ «Պորտուգալիայի և Իսպանիայի հողերով շրջելիս» էսսեն է:

Ունամունոյի՝ իր ժամանակի գրականության մեջ առաջադրած թերևս ամենամեծ և ամենակարևոր նորամուծությունը՝ *Նիվոլայի* ժանրն է, որտեղ միախառնվում են փիլիսոփայական մտածողությունն ու գեղարվեստական արձակը: Նիվոլան առաջարկում է երկու աշխարհների, երկու հորինվածքների հետաքրքիր միաձուլում, որտեղ հերոսը պետք է ապացուցի սեփական գոյության, էքզիստենցիայի իրականությունը:

Նիվոլայի գրատեխնիկայի առանձնահատկություններից մեկը *երկխոսության* շեշտադրումն է: Ունամունոն նշում է, որ իր վիպական կերպարներն անհատականություններ են, որոնք անկախ են և որ նման հերոսների համար է ստեղծել «նիվոլայի» ժանրը: Նիվոլայում կարևոր չէ գիշեր է, թե ցերեկ, կարևոր չէ գործողությունների վայրը, կարևորը՝ հոգևոր և հոգեկան խնդիրներն են, որոնցով ապրում են նիվոլայի հերոսները: Բացակայում են նկարագրությունները, գործողությունների պատկերումը, ինչպես նշում է հեղինակը, դրանք *ինտիմ դրամաներ* են:

Ունամունոն համոզված է՝ վեպը մեզնից յուրաքանչյուրի կյանքն է՝ գրված թղթի վրա: Հետևաբար գրողն առաջարկում է վեպի երեք տարբեր ընկալումներ՝

1. Վեպն իբրև գրական ժանր
2. Վեպն իբրև նիվոլա, որը սովորական վեպ չէ, քանի որ ունի ներքին, իրական, հավերժական, հոգեվարքային իրականություն
3. Վեպն իբրև կյանք, քանի որ վեպ գրողն առաջին հերթին գրում է իր մասին, իր կյանքի պատմությունը: Ահա սա է պատճառներից մեկը, որով հիմնավորվում է հանգամանքը, թե ինչու է այդքան դժվար որոշել, թե «Ինչպես է ստեղծվում վեպը» ստեղծագործությունը գրական որ ժանրին է պատկանում, և սա այն պատճառով, որ նրանում միախառնվում են՝ վեպը, նիվոլան, ինքնակենսագրական ժանրը և էսսեն:

¹¹ Unamuno de, M., En Torno al Casticismo, Madrid, 1996 p. 16.

Իր վեպերից մեկում՝ «Ինչպես է ստեղծվում վեպը», Ունամունոն զարգացնում է գոյության փիլիսոփայության կարևորագույն խնդիրներից մեկը՝ սեփական պատմության կերտման պրոբլեմը, առանց որի անիմաստ է մարդու ֆիզիկական գոյությունը երկրի վրա. «Ապրել պատմության մեջ և ապրել պատմությունը»:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻԳԵԼ ԴԵ ՈՒՆԱՄՈՒՆՈՅԻ ՆԻՎՈԼԱՆԵՐԸ

2.1. ԿՅԱՆՔԻ և ՃԱԿԱՍՏԱԳՐԻ ՈՂԲԵՐԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՆԱՄՈՒՆՈՅԻ «ՄԱՌԱԽՈՒՂԸ» ՆԻՎՈԼԱՅՈՒՄ

«Մառախուղը» նիվոլայում Ունամունոն բացահայտում է սեփական փիլիսոփայության հիմնական թեմաները՝ հավիտենություն, անմահության հանդեպ անհագ տենչ, կյանքի և ճակատագրի հանդեպ ողբերգական զգացում, բացարձակ ճշմարտության փնտրտուք: Նիվոլայում գրողն առաջարկում է մտածել նաև կյանքի վաղանցիկության, մահվան և ազատ ընտրության գաղափարների շուրջ: Նիվոլայում վեր է հանվում Ունամունոյի փիլիսոփայական մտքի ուժը և բացահայտվում նրա ստեղծած գրականության գլխավոր սկզբունքը, այն է՝ *գրվածը գրված է, ոչինչ չես փոխի*¹²: Երբ մարդը հեռանում է երկրային կյանքից, այսինքն՝ երբ կտրվում է գլխավոր հերոսի՝ Ավգուստո Պերեսի գոյության կամ Ունամունոյի երևակայության թելը, ապա այլևս անհնար է հարություն տալ մեռած գաղափարին: Կյանքի հանդեպ ողբերգական զգացումն արտահայտվում է կոնկրետ մարդու՝ «մսից և ոսկորից» ծնված էակի գոյության մեջ¹³: Սա նաև կենսական պայքար է, մի կողմից՝ միավորվելու համայն մարդկության, մյուս կողմից՝ Աստծու հետ, այս կոնֆլիկտն առաջ է բերում ներքին խորը տագնապ, որն Ունամունոն անվանում է էքզիստենցիալ հոգս¹⁴:

«Մառախուղը» գլխավոր հերոսի՝ Ավգուստո Պերեսի գիտակցության միջոցով ներկայացվող մեծ ճանապարհորդություն է, որի ընթացքում գրողը մտորում է կյանքի իմաստի փնտրտուքի շուրջ, որն էքզիստենցիալիզմի առանցքային խնդիրներից մեկն է ¹⁵ : Վերջինս պատմություն է մի մարդու մասին, ով փնտրելով իր կյանքի, գոյության իմաստը, մոլորվում է մառախուղում, մի կերպար, որ ապրում է անբջեղով՝ միաժամանակ թաթախվելով անգիտակցության մառախուղում, իր գոյությունը կերտում է երազի մեջ: Արթնության և երազի միջև հակասական պայքարը հենց կյանքի իմաստի փնտրտուքն է, որի համար հերոսն ուզում է ապրել, ուզում է լինել: Ստացվում է՝ «Մառախուղը» մեր կյանքն է, որը հակադրվում է գոյության և չգոյության վախին, մառախուղը պայքար է

¹² Նույն տեղում, էջ 33:

¹³ Benítez, H., El drama religioso de Miguel de Unamuno, Buenos Aires, 1950, p. 19.

¹⁴ Unamuno de, M., Dos artículos y dos discursos, Madrid, 1930, p. 15.

¹⁵ Caballe, A., Unamuno, filósofo, Madrid, 1998, p. 34-35.

ընդդեմ մահվան: Գլխավոր հերոսն ապրում է սեփական գոյության և չգոյության կասկածի մեջ և տառապում դրանից: Էքզիստենցիալ մյուս հերոսների նման Ավգուստո Պերեսը նույնպես մի օր ինքն իրեն հարց է տալիս սեփական գոյության մասին, որի միջոցով բացահայտվում է ողբերգությունը. նրանք, ովքեր գոյություն չունեն, չեն կարող մեռնել. «Ո՞վ գիտի, ես գոյություն ունեմ, թե ոչ: Ոչ ոք ոչինչ չգիտի սեփական գոյության մասին»¹⁶:

«Մառախուղը» նիվոլան նաև անձի ներսում ապրող բազմապիսի «ես»-երի բախումն է, ընդ որում՝ ամենատարբեր հայեցակետերում՝

1. Ես այնպիսին եմ, ինչպիսին որ կամ
2. Այնպիսին եմ, ինչպիսին կարծում եմ, թե կամ
3. Այնպիսին եմ, ինչպիսին ուրիշներն են ինձ տեսնում
4. Այնպիսին եմ, ինչպիսին մյուսները կարծում են, թե կամ:

Եվ ահա Ավգուստո Պերեսը պետք է որոշի, թե ով և ինչպիսին է ինքը, սակայն մինչ այդ, անհրաժեշտ է համոզվել սեփական գոյության իրականության մեջ: Ավգուստո Պերեսին նետել են աշխարհի թատրոն, որը գտնվում է գոյության տրագիկոմեդիայի մեջ: Անվերջ պայքարելով՝ մարդն ապրում է կյանքի մառախուղի մեջ և ինքն իրեն հարց տալիս, թե արդյոք իր ապրած կյանքը երազ չէ, արդյոք իրական¹⁷ն է իր անձը: Իրական կամ մտացածին կերպարների վերլուծությունը գրողը փորձում է դուրս բերել հետևյալ բանաձևով.

1. Հորինված կամ մտացածին գրական կերպարներ, որոնք երազն են իրենց արարող հեղինակի կամ ընթերցողի
2. Իրական թե մտացածին, միևնույն է, մարդը Աստծու երազն է աշխարհի վրա
3. Աստված, որը մարդու երազն է երկնքում և իր ներսում:

Իրական, ճշմարիտ գոյության հաստատման համար Ունամունտն առաջադրում է հետևյալ երեք դրույթները, որոնք կենսական նշանակություն ունեն մարդու համար, սրանցից յուրաքանչյուրի բացակայությունը կլիախտեր իրական գոյի լիարժեքությունը:

1. *Ուտում եմ, ուրեմն՝ կամ:*
2. *Միքում եմ, ուրեմն՝ կամ:*
3. *Տառապում եմ, ուրեմն՝ կամ:*

2.2 ԱՆՁԻ, ՆՐԱ «ԵՄ»-ԵՐԻ ԽՆԴԻՐԸ՝ «ԵՐԵՔ ԽՐԱՏԱԿԱՆ ՎԵՊԵՐ և ՄԵԿ ՆԱԽԱԲԱՆ», «ԴՈՆ ՍԱՆԴԱԼԻՈՆ՝ ՇԱՄՄԱՏ ԽԱՂԱՑՈՂԸ»
ՆԻՎՈԼԱՆԵՐՈՒՄ

Կյանքի ողբերգականության շուրջ են հյուսվում նաև Ունամունտի խրատական վեպերը, որոնց գրողը նույնպես անվանում է նիվոլա:

¹⁶ Նույն տեղում, էջ 292:

Խրատական վեպերից յուրաքանչյուրը մարդկային էքզիստենցիայի մեկ օրինակ է, դրանց հերոսները հոգեվարքի մեջ պայքարող հոգիներ են, որոնք տառապում են *լինելու* և *չլինելու* կասկածից:

«Երեք խրատական նովելներ և մեկ նախաբան», «Դոն Սանդալիոն՝ շախմատ խաղացողը» նիվոլաներում Ունամունոն անդրադառնում է անձի իսկության կամ իրականության և նրա ներսում գոյություն ունեցող «ես»-երին՝ դրանք զուգակցելով կամքի, *ցանկանալ լինելու* և *ցանկանալ չլինելու*, *չցանկանալ լինելու* և *չցանկանալ չլինելու* գաղափարների հետ¹⁷:

Ունամունոյի համար իր ստեղծած կերպարների իրականությունը կասկածից վեր է: Մարդու իրականությունը պայմանավորված է ուրիշի, մյուսի՝ իր անձը պատկերացնելու, ընկալելու ձևից, դրանով է պայմանավորված նրա կերպը: Այստեղ Ունամունոն առանձնացնում է իրականության արտաքին և ներքին շերտեր, երկու «ես»-եր՝ արտաքին «ես», որ հարաբերության մեջ է գտնվում արտաքին աշխարհի հետ, որտեղ բոլորն են, և ներքին «ես», որտեղ դու մենակ ես, ինքդ քեզ հետ, այլ կերպ ասած՝ անդրադառնալով արտաքին և ներքին աշխարհներին, Ունամունոն նշում է, որ ներքին աշխարհը վերաբերում է գիտակցությանը, իսկ արտաքինը՝ զգայությանը:

Մարդու ներսում ապրող բազմապիսի «ես»-երի վերլուծության համար խրատական նիվոլաների նախաբանում Ունամունոն պատմում է երեք Խուանների և երեք Թոմասների մասին տեսությունը. «Երբ Խուանը և Թոմասը զրուցում են երկուսով, զրույցն ընթանում է վեցի միջև, այսպիսով՝ Երեք Խուաններ՝

- 1 Իրական Խուան, որ հայտնի է միայն իրեն ստեղծողին
- 2 Խուանի իդեալական Խուանը, որ երբեք իրական չէ և շատ հաճախ չափազանց տարբեր է նրանից
- 3 Թոմասի իդեալական Խուանը, որը ոչ իրական Խուանն է, ոչ էլ Խուանի Խուանը և շատ հաճախ շատ տարբեր է երկուսից էլ

Երեք Թոմասներ՝

- 1 Իրական Թոմաս
- 2 Թոմասի իդեալական Թոմասը
- 3 Խուանի իդեալական Թոմասը

Այսինքն՝ առաջին դեպքում այն մարդն է, ով իրականում կա, երկրորդի դեպքում՝ այնպիսին է, ինչպիսին ինքն է իրեն համարում, իսկ երրորդը՝ ինչպիսին մյուսն է իրեն պատկերացնում»¹⁸:

Ցանկանալ լինելու և *ցանկանալ չլինելու* կամ *չցանկանալ լինելու* և *չցանկանալ չլինելու* գաղափարների ձևակերպումն Ունամունոն փորձում է դուրս բերել հավատացյալի և աթեիստի մասին հիմնավորմամբ, ըստ որի՝ հավատացյալի և աթեիստի միջև տարբերությունը մեծ չէ, ինչպես որ կարող

¹⁷ Cifo González, M., Miguel de Unamuno, Obras Completas, Madrid, 1967, p. 123.

¹⁸ Unamuno de, M., Tres novelas ejemplares y un prólogo, Madrid, 1920, p. 5.

է թվալ առաջին հայացքից, քանի որ հավատացյալը հավատում է, որ Աստված գոյություն ունի, իսկ աթեիստը՝ որ գոյություն չունի, ստացվում է՝ երկուսն էլ հավատում են, կնշանակի՝ երկուսն էլ հավատացյալ են:

Արդյունքում առաջադրում է հավատի չորս կատեգորիա՝

1. Հավատալ, որ...
2. Չհավատալ որ...
3. Հավատալ, որ չ...
4. Չհավատալ, որ չ...

համապատասխանաբար՝

1. Ցանկանալ լինել
2. Ցանկանալ չլինել
3. Չցանկանալ լինել
4. Չցանկանալ չլինել¹⁹:

«Բսկական տղամարդը» նիվոլայում Ունամունոն ներկայացնում է տղամարդու մի կերպար, որին կրկին դիտարկում է «ես»-ի տարբեր հայեցակետերից: Ալեխանդրո Գոմեսը շարունակ կրկնում է, որ իր աշխարհը ոչ մի կապ չունի այլոց աշխարհի հետ: Այսինքն՝ *նա այնպիսին է, ինչպիսին ինքն է իրեն տեսնում*, այլ ոչ թե *այնպիսին, ինչպիսին՝ ուրիշներն են իրեն համարում*: Նիվոլայում ոչ ոք չգիտի, թե Ալեխանդրոն ով է և որտեղից է եկել, և սա պատահական չէ. «*Ոչ ոք չգիտեր, թե նա ով էր, որտեղից էր եկել: Ոչ ոք ոչինչ չգիտեր* ոչ նրա ծագման, ոչ էլ ազգականների մասին: *Ոչ ոք* նույնիսկ լսած չկար, որ Ալեխանդրոն խոսեր իր ծննդավայրի կամ մանկության մասին...»²⁰ : Ահա Ունամունոն բացահայտում է Ալեխանդրոյի՝ ուրիշների համար *ոչինչ* լինելը, այլ կերպ ասած՝ *չցանկանալ լինելը* կամ *ցանկանալ չլինելը*, ահա թե ինչու Խուլիայի այն հարցին, թե ուր է նրա ընտանիքը, Ալեխանդրոն պատասխանում է, որ իր ընտանիքն ու զարմը սկսվում են իրենից, իր աշխարհը սկսվում է իր անձից, քանի որ իր համար ընդունելի է միայն իր *ներքին իրականությունը*, ինքն այնպիսին է, ինչպիսին՝ *ցանկանում է լինել*, ոչ այնպիսին, ինչպիսին ուրիշներն են տեսնում կամ կուզենային տեսնել:

«Դոն Սանդալիոն՝ շախմատ խաղացողը»²¹ նիվոլայում (1930), Ունամունոն կրկին անդրադառնում է անձի իսկության կամ ներքին «ես»-ի պրոբլեմին: Ըստ նրա մարդու էությունը կազմում են չորս հիմնական «ես»-եր.

1. Ես այնպիսին եմ, ինչպիսին՝ ուրիշները տեսնում են ինձ

¹⁹ La Recilla de, M., El misterio de la personalidad en Unamuno, Buenos Aires, Instituto de Publicaciones, 1950, p. 51.

²⁰ Նույն տեղում, էջ 52:

²¹ Longhurst A. C., Teoría de la novela en Unamuno de "Niebla" a don Sandalio, Salamanca, 2003. p. 36.

2. Ես այնպիսին եմ, ինչպիսին ձգտում եմ լինել, որպեսզի ուրիշներն այդպիսին տեսնեն ինձ
3. Ես այնպիսին եմ, ինչպիսին՝ կարծում եմ, թե այդպիսին եմ
4. Ես այնպիսին եմ, ինչպիսին որ իրականում կամ:

Գլխավոր հերոսը սպանում է իր ժամանակը՝ հեղինակի հետ շախմատի խաղատախտակի առջև նստած: Նրանք երբեք չեն խոսում, իսկ ենթադրյալ *երկխոսությունն* ընթանում է ներքին *մենախոսության* ձևով: Որոշ ժամանակվա բացակայությունից հետո հեղինակը հանկարծ գիտակցում է, որ կարոտում է Դոն Սանդալիոյին, բայց ոչ նրան, որի հետ կիսում է շախմատի խաղատախտակը, այսինքն՝ իրական մարդուն, այլ նրան, որի կերպարն իր ուզածով կերտել է իր մտապատկերում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՄԻԳԵԼ ԴԵ ՈՒՆԱՄՈՒՆՈՑԻ ՓԻԼՍՈՓԱՅԱՆ ՎԵՊԵՐԸ

3.1. ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՄԱՆ «ԲԱՐԻ ՍՈՒՐԲ ՄԱՆՈՒԵԼ ՆԱՀԱՏԱԿԸ», «ԱԲԵԼ ՄԱՆՉԵՍ», «ՍՈՐԱՔՈՒՅՐ ՏՈՒԼԱՆ», «ՄԵՐ և ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ», ԿՐՈՆԱՓԻԼՍՈՓԱՅԱՆ ՎԵՊԵՐՈՒՄ

Գոյություն չունեն միայնակներ, այլ միայն՝ մենություն, իսկ կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ ջանք՝ կոտրելու այդ մենությունը: Համընդհանուր և անհատական մենության խնդիրն Ունամունոն փորձում է լուծել քրիստոնեության մեջ: Մի՞թե բոլոր վանականներն ու եկեղեցական հայրերն իսկապես հավատացել են Աստծուն, ինչպես եկեղեցին է փաստում²²: Այս մասին Ունամունոն գրում է իր «Բարի Սուրբ Մանուել նահատակը» վեպը (1931)²³, որտեղ պատմում է ոչ հավատացյալ, սակայն «սուրբ» քահանայի մասին²⁴: Կրկին առաջ է գալիս Ունամունոյի վեպերին հասուն կախություններից մեկը՝ մարդը, որ իր ներսում հավատ չունի, անմահության և սուրբ հավատի գաղափարներ է տարածում ուրիշների մեջ՝ դրանով դառնալով աստվածային սիրո և փրկության հույսի օրինակ շատերի համար:

Գրողը փորձում է հավատը ներկայացնել երկու մասով. մեկը՝ տրամաբանական, ռացիոնալ կողմն է, այսինքն՝ դոգման, ուսմունքը, մյուսը՝ զգայական կամ իռացիոնալ, այսինքն՝ զգացմունքային այն կապվածությունը, որը հավատացյալը զգում է Աստծու և հավատի հանդեպ: Հաճախ հավատը զուգորդվում է *անորոշության* հետ, որը կասկածի հիմքն է, իսկ կասկածը մարդուն մղում է տրամաբանական եզրահանգումների, այլ կերպ ասած՝ մարդու օրինաչափ վիճակը հենց անորոշությունն է: Ինչ վերաբերում է *անմահությանը*, ապա, ըստ Ունամունոյի, հավատն այն բանի

²² Abella, M. J., Dios Y La Inmortalidad. El Mundo Religioso De Miguel De Unamuno, Madrid, 1997, p. 23-26.

²³ Unamuno de, M., San Bueno el Mártir, Madrid, 1955, p. 21.

²⁴ Unamuno de, M., De esto y aquello, Buenos Aires, 1951, vol. II. 1957 p. 15-25.

հանդեպ, որ մեր միտքը, հիշողությունները, հավատալիքները, անձնական փորձը հաղթում են մահին և նրանից հետո ապրում, դրա համար պետք է, որ մարդը կարողանա ապրի, հեշտ չէ նման անմահության հասնելը, միայն քրիստոնեությունը կարող է հավիտենականություն պարգևել, ընդ որում՝ նույնը վերաբերում է նաև մարմնի հարության գաղափարին, որն առավել կենսաբանական է:

Քրիստոնեության մեջ Ունամունոն առաջադրում է երկու ուղղվածություն՝ բացարձակ ինդիվիդուալ քրիստոնեություն և հոգեվարքային քրիստոնեություն: «Նվիրվածություն և ողբերգություն»՝ սրանք իրենց արտահայտությունը գտնում են հատկապես քրիստոնեության մեջ: Ունամունոն առավել քարոզում է «հավատալու ցանկություն», քան «հավատ», քանի որ հավատում է նա, ով ցանկանում է հավատալ, իսկ այդ հավատը փոխկապակցված է հույսի հետ²⁵:

Մարդ-Աստված հարաբերություններում Ունամունոն դրսևորում է լիովին *անհատապաշտական* վերաբերմունք. «Ես Աստծու համար, Աստված միայն ինձ համար»²⁶:

Անդրադառնալով հավատ, բանականություն, զգացմունք, բնագդ կատեգորիաներին՝ Ունամունոն դրանց մեջ առանձնացնում է *նախանձը*: Նախանձողը չի կարող հավատացյալ լինել, աստվածաշնչյան Կայենն էլ սրտում հավատ չունեի, երբ նախանձից դրդված, սպանեց Աբելին. առաջին մահը բռնի եղավ՝ եղբայրասպանություն եղավ՝ Կայենը սպանեց Աբելին²⁷: Նախանձի գաղափարն Ունամունոն հստակեցնում է իր՝ «Աբել Սանչես» վեպում, որն աստվածաշնչյան «Աբելի և Կայենի» նոր մեկնաբանությունն է²⁸: Անդրադառնալով նախանձ հոգիներին՝ Ունամունոն նրանց բաժանում է երկու խմբի, նրանք, ովքեր չեն գիտակցում, որ նախանձ են և վնասում են ուրիշներին, և նրանք, ովքեր գիտակցում են նախանձ լինելու իրենց ողբերգությունը և ամեն գնով պայքարում են այդ արատի դեմ: Ըստ Ունամունոյի, հենց դրանում է նրանց մեծությունը: Ունամունոյի համոզմամբ՝ նախանձն իբրև ժառանգություն մեզ մնացել է Կայենից, որը նրան տրված էր ի վերուստ: Ահա թե ինչու իր վեպում գրողը փորձում է արդարացնել Խուակինին, որովհետև համոզված է՝ մեղավոր չէ, որ նախանձում է: Այդ դեպքում ո՞վ է մեղավոր. հավանաբար ուրիշները, նրանք, ովքեր իրենց հաջողություններով մեր մեջ նախանձ են հարուցում:

Համաձայն էքզիստենցիալիզմի սկզբունքների, եթե իսկական մարդը նա է, ով տառապում է, սիրում և արարում, ապա Ունամունոն այդ սիրուց բխեցնում է *ինքնագոհության և նվիրումի գաղափարը*, որը

²⁵ Լույն տեղում, էջ 56:

²⁶ Urbina, J., Miguel de Unamuno y Baroja frente a la cultura de masas: Actitudes, juicios, reflexiones y expectativas, 1898-1939, Bilbao, 1953, p. 257.

²⁷ Unamuno de, M., Inquietudes y meditaciones, Madrid, 1957, p. 27.

²⁸ Unamuno de, M., Abel Sánchez, Madrid, 1897, p. 3 - 47 .

զարգացնում է «Մորաքույր Տուլան» վեպում²⁹: Վեպում Ունամունտն իր հերոսուհուն անվանում է Սուրբ Մայր կամ Կույս Մայր, ընդ որում՝ երկու բնորոշումներն էլ կարևոր են, քանի որ կապվում են՝ Սուրբ Կույս Մարիամ, Սուրբ Թերեզա, Աբիգեա Սունամիթա անունների հետ³⁰:

Աբիգեա Սունամիթայի և Դավթի մահվան տեսարանը գրողն օգտագործում է «Մորաքույր Տուլան» վեպում, որտեղ Տուլան իր գրկում ջերմացնում է մահվան մահճում հոգեվարքող տղամարդուն, որը մահացած քրոջ ամուսինն է: Ունամունտն շեշտադրում է *կուսական մայրության* գաղափարը: Կնոջ կուսական հոգին հակադրում է սեռականության գաղափարին, որը ըստ գրողի առավել հատուկ է տղամարդուն:

Մտի և մտքի, կյանքի և փիլիսոփայության, գիտության և իրականության հակադրություններ տեղ են գտնում Ունամունտյի «*Մեր և մանկավարժություն*» վեպում, որը գրողը համարում է իր՝ իբրև հակադրությունների գրողի լավագույն ստեղծագործությունը: Մինչև կյանքի և գիտության հակադրության վերլուծությունը, Ունամունտն առաջին հերթին անդրադառնում է գիտությանն ու փիլիսոփայությանը: Իմացաբանության համար գրողն առավել ընդունելի է համարում փիլիսոփայական ճանաչողությունը, քան գիտականը, նման վերաբերմունքի պատճառը թերևս բանականության հանդեպ հավատի պակասն էր, իսկ փիլիսոփայության «գործը»՝ կյանքը՝ ռացիոնականացնելը և միաժամանակ բանականությունը կենսական դարձնելը³¹:

Վեպում Ունամունտն ներկայացնում է մի տղամարդու, ով տրամաբանական վերլուծության միջոցով հանգում է այն համոզմունքին, որ պետք է սիրահարվել խելացի և ուսյալ կնոջ, նրանից զավակ ունենալ, որին մոտ ապագայում կարող է դարձնել այնպիսին, ինչպիսին որ անձամբ երագել է դառնալ իր ամբողջ կյանքի ընթացքում, զավակ, ով իր ողջ էությանը նվիրված կլինի բացառապես գիտությանը: Սակայն գիտությունն ու մանկավարժությունը կործանարար, մինչևիսկ մահացու հետք են թողնում երիտասարդ Ապոլոդորոյի ձևավորման վրա, քանի որ երկուսն էլ իրենց բնույթով և բովանդակությամբ հակակենսական են, ահա դրանով է բացատրվում երիտասարդ Ապոլոդորոյի առեղծվածային մահը³²: Խուլիան Մարիասը առաջ է քաշում հետևյալ հարցադրումը. «Ինչու՞ է ինքնասպան լինում խելճ Ապոլոդորոն, մի՞թե ազատվելու համար բանականության ծանրությունից և տրամաբանական անվերջանալի վերլուծություններից, որոնք ի վերջո սպանում են նրան»³³:

²⁹ Ontañón de, L. P., En torno a la Tía Tula, Madrid, 1988. p. 23.

³⁰ Blanco C., El Unamuno contemplativo, México, 1959, p. 12-15.

³¹ Abellán J. L., Historia crítica de pensamiento español, Madrid, 1989, p.123-128.

³² Unamuno de, M., Amor y Pedagogía, Salamanca, 1989, p. 41-42.

³³ Unamuno de, M., Amor y Pedagogía, Salamanca, 1989, p. 69-70.

3.2. ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ» ՎԵՊԻ ՄԻՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ունամունոն կրոնափիլիսոփայական իր կոնցեպտները բխեցնում է հակաթեզից և դրանց լուծումը ներկայացնում կրկին հակաթեզի միջոցով. «Ինչ-որ մեկը կարող է ասել, որ խաղաղությունը հենց կյանքն է կամ մահը, և որ պատերազմը մահ է կամ խաղաղություն, քանզի դրանց միջև գրեթե չկա տարբերություն, համապատասխանաբար, խաղաղություն պատերազմում, թե պատերազմ՝ խաղաղության մեջ նույնն է, ինչ կյանքը մահվան մեջ և մահը՝ կյանքի, և հենց սա է հոգեվարքը»³⁴ : Արտաքին և ներքին աշխարհները գտնվում են հակադիր բևեռներում, ըստ Ունամունոյի՝ ներքին աշխարհը ճշմարիտ է, արտաքինը՝ կեղծ³⁵ : Վերը նշված հակադրությունն իր հերթին առաջ է բերում այլ հակադրություններ՝ իսկական և անիսկական կյանք, ներաշխարհ և արտաքին աշխարհ, սուբստանցիալ և ոչ սուբստանցիալ, անձնավորություն և անհատականություն, մշակույթ և քաղաքակրթություն, պատմություն և պատմական միջարկություն, անձնական կյանք և պատմական կյանք, լրություն և աղմուկ, պատերազմ և խաղաղություն, հոգի և մատերիա, հոգի և մարմին, հոգի և բանականություն, պոեզիա և գիտություն, խենթություն և խելամտություն, հավատ և կասկած³⁶ :

Ըստ Ունամունոյի՝ ծնվել, նշանակում է՝ ապրել, և ապրելով՝ գրել սեփական պատմությունը³⁷ : Օճնդյան պահից ի վեր, մարդը պետք է լքի մանուկների աշխարհը և մտնի վեպի աշխարհ, որտեղ միայն մեծերն են, որտեղ խաղաղություն գտնելու համար պետք է պատերազմել. «Խաղաղություն»-ն ես ուզում, պատրաստվիր պատերազմի, քանզի միայն խաղաղության մեջ կարող ես պատերազմ գտնել», ահա այսպիսի հակասական գաղափարով է առաջնորդվում բասկ գրողը «Խաղաղություն պատերազմում» վեպում³⁸ : Այս վեպն աշխարհի վերակերտումն է երևակայության միջոցով : Մա իրական աշխարհի պատկերն է, որը չի կարող գոհացնել մարդուն, քանի որ լի է պատերազմներով, հակասություններով, աններդաշնակությամբ : Մարդը չի կարող ապրել նման իրականության մեջ, այդպիսի կյանքը հարիր չէ նրան, նույնիսկ պատերազմի թոհուրոհում մարդն ի վերջո խաղաղություն է փափագում³⁹ : Գրողը համաձայն չէ պատմության՝ արտաքին շերտի ընթերցանության և

³⁴ García, F. Miguel de Unamuno, Diario íntimo, Madrid, 1970, p. 412.

³⁵ Blanco Aguinaga, C. Interioridad y exterioridad en Unamuno, México, 2001, p. 55.

³⁶ Padilla, Cf. M., Unamuno, filósofo de encrucijada, Madrid, 1953, p. 55-59.

³⁷ Garagorri, P., Introducción a Miguel de Unamuno: el desnacer y la feliz incertidumbre, Madrid, 1986, p. 23-26.

³⁸ Extremiana, J., La guerra de los vascos en la narrativa del 98, San Sebastián, Aramburu, 1983, p. 11-55.

³⁹ Robles, L., El Mal del Siglo, Salamanca, 1999, p. 99-131.

ընկալման հետ, քանզի պատմության մեջ կա նաև ներքին շերտ, որտեղ ամփոփվում է *պատմական միջարկությունը*, իսպաներեն՝ «intrahistoria»-ն կամ պատմության ոգին ⁴⁰ : Ունամունոն տարբերակում է դնում պատմության և պատմական միջարկության միջև: Ըստ նրա՝ պատմությունը՝ ակնհայտ փաստերի ժողովածու է, փաստեր, որոնց մասին ամեն օր գրում են թերթերում, իսկ պատմական միջարկությունն այդ պատմության նյութն է, հիմքը, թաքնված, վեր չհանված մասը, որում սակայն ամփոփվում է ժողովրդի հավերժությունը ⁴¹ : Պատմական միջարկությունն ավանդույթ է, սակայն ոչ կարծրացած, մեռած ավանդույթ, հակառակը, այն՝ պատմության կենարար հիմքն է: Ունամունոն երբեմն պատմական միջարկությունը կապում է թատրոնի վերածննդի հետ. «Թատրոնը, որ մոտեցել է իր կյանքի մայրամուտին և այլևս չի կարող ինքն իրեն սնել, նրան չի մնում այլ բան, քան իջեցնել վարագույրը և մոտենալ ժողովրդին» ⁴² : Պատմական միջարկության միջոցով հնարավոր է վերականգնել անցյալը ներկան հաստատելու և ապագան կերտելու համար, իսկ ժողովուրդը կարող է մտածել ապագայի մասին միայն այն դեպքում, երբ ունի պատմություն: Առհասարակ, գրողը չի ժխտում, որ վեպը գրելիս կրել է Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» ստեղծագործության ազդեցությունը, առհասարակ անժխտելի է երկու գրողների փիլիսոփայական, հատկապես՝ կրոնական մտածողության և գրելաոճի նմանության փաստը, իբրև ապացույց բավական է կարդալ նրանց ստեղծագործությունները, հատկապես՝ անձնական նամակներն ու օրագրերը ⁴³ : Ըստ Ունամունոյի՝ յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր փիլիսոփայությունը, որով բնորոշվում է այդ մարդկանց ազգային, ժողովրդական առանձնահատկությունները, որոնց շնորհիվ ժողովուրդները տարբերվում են իրարից⁴⁴: Իսպանական փիլիսոփայության խնդիրը պետք է լինի մարդու փրկության պրոբլեմը, և ընդհանրապես, մարդու խնդիրը պետք է լինի ոչ թե հասարակությանը փոխելը, այլ իր մերձավորին օգտակար լինելը, եթե յուրաքանչյուրն օգնի իր նմանին, դրանից կշահի ամբողջ մարդկությունը⁴⁵:

⁴⁰ Unamuno de, M., Ramplonería, Madrid, 2005, p. 23-24.

⁴¹ Garrido A., Antonio J., Etnografía y politología del 98. Unamuno, Ganivet y Maeztu, Madrid, 2007, p. 11.

⁴² Նույն տեղում, էջ. 36.

⁴³ Hamling. A. Tolstoi, Unamuno y el existencialismo cristiano, Canada, 1998, p. 92-104.

⁴⁴ Urbina, J., Miguel de Unamuno y Baroja frente a la cultura de masas: Actitudes, juicios, reflexiones y expectativas, 1898-1939, Bilbao, San Martín, 1953. p. 15.

⁴⁵ Zubizarreta, A., Miguel de Unamuno y Pedro Corominas, una interpretación de la crisis de 1897, Salamanca, 1959, p. 72-79.

1. Ունամունոն հակասությունների գրող է: Նրա փիլիսոփայական էսսեներն ու վեպերը կառուցվում են հակադրությունների վրա: Ունամունոյի արձակին հատուկ է նաև կրկնությունը, ըստ գրողի՝ ցանկացած գրող որքան շատ է գրում, այնքան շատ է կրկնվում: Սակայն կարևորն այն է, որ գրողը կարողանա ի ցույց դնել սեփական ողբերգությունը, չպետք է մոռանալ, որ, ըստ գրողի, մեզինից յուրաքանչյուրն առանձին ողբերգություն է:
2. Ուսումնասիրելով Ունամունոյի կրոնափիլիսոփայական վեպերն ու նիվոլաները՝ «Դոն Կիխոտի և Սանչոյի կյանքը» (1905), «Քրիստոնեության հոգեվարքը» (1924), «Մառախուղը» (1914), «Աբել Սանչես» (1917), «Սուրբ Մանուել Բարի Նահատակը», «Դոն Սանդալինոն՝ շախմատ խաղացողը» (1930), կարելի է եզրակացնել, որ վերջինիս փիլիսոփայության հիմքում կրոնական էքզիստենցիալիզմն է կամ պարզապես կրոնը: Ունամունոյի փիլիսոփայության ուսումնասիրության առարկան կոնկրետ մարդն է, որին անվանում է «մսից և ոսկորից», որի գաղափարը վերցնում է Կյերկեգորից, որն իր հերթին խոսում է «մասնավոր» կամ «կոնկրետ» մարդու մասին:
3. Ունամունոյի ստեղծագործություններում կարելի է հանդիպել մի շարք փիլիսոփաների և աստվածաբանների անունների՝ Կյերկեգոր, Պասկալ, Սուրբ Օգոստինոս, Դեկարտ, Սպինոզա, Կանտ, Հեգել: Գրողը ընթերցում է բոլորին, սակայն յուրաքանչյուրից առանձնացնում է իր համար ընդունելի այս կամ այն գաղափարը, չի ընդունում փիլիսոփայական և ոչ մի համակարգ, քանի որ համոզված է, որ համակարգը սպանում է, քայքայում: Ճշմարիտ փիլիսոփայությունը «մսից և ոսկորից» մարդու իրական կյանքն է:
4. Ունամունո-Կյերկեգոր մտածողներին միավորում է հուսահատության գաղափարը, որն անբաժան է մարդուց, բայց որից հնարավոր է փրկվել հավատի միջոցով: Թե՛ Ունամունոյի, թե՛ Տոլստոյի համար ճշմարիտ կրոնը քրիստոնեությունն է, իսկ հավատի բարձրագույն նպատակը՝ ճանաչել Քրիստոսին: Անժխտելի է Ունամունո-Տոլստոյ գրողների կրոնափիլիսոփայական դատողությունների նմանությունը: Եթե ըստ Կյերկեգորի հավատալու կամքը պայմանավորված է մարդու ներքին ազատությամբ, ապա Ունամունոն այդ կամքը տեսնում է մարդու գիտակցության մեջ այնքան ժամանակ, քանի դեռ նա կենդանի է, Տոլստոյն այդ կամքը տեսնում է մերձավորի հանդեպ սիրո մեջ:
5. Ինչպես փիլիսոփայության մեջ, այնպես էլ՝ արվեստում, Ունամունոյին հետաքրքրում է միայն տառապող մարդը, արվեստն օգնում է մարդուն գիտակցել և ընդունել դիմացինի ողբերգությունը: Արվեստի գլխավոր գործառնությունը սովորեցնելն է՝ տեսնել գեղեցիկը:

Արվեստների մեջ ամենագեղեցիկը պոեզիան է, կարևոր է լեզուն, որն ըստ գրողի տղամարդու մենաշնորհն է: Արվեստի ձևերի մեջ գրողը նախապատվությունը տալիս է գեղանկարչությանը, (հիացմունքի խոսքեր հղում Վելասկեսի, Էլ Գրեկոյի, Գոյայի հասցեին), ֆիգուրատիվ արվեստին, ճարտարապետությանը, (լավագույն ճարտարապետներին անվանում է մեծ արվեստագետներ), երաժշտությանն անդրադառնում է այնքանով, որքանով որ տեսնում է պոեզիայի մեջ: Չի ընդունում Դարիդի առաջ քաշած մոդեռնիստական երաժշտականությունը, մյուս կողմից՝ շեշտադրում է պեյզաժի գեղեցկությունը:

6. Ունամունոյի փիլիսոփայական մտածողության արտահայտման լավագույն ժանրը փիլիսոփայական վեպն է, որը գրողն անվանում է՝ նիվոլա (փիլիսոփայական վեպ 90-ական թվ.), որտեղ միախառնվում են փիլիսոփայական մտածողությունն ու գեղարվեստական արձակը: «Նիվոլա» եզրի հեղինակն Ունամունոն է, իսկ տերմինը չունի թարգմանություն: Վեպի այս ժանրով գրողը կոտրում է տվյալ ժամանակի համար ընդունելի գրական օրենքները՝ առաջ քաշելով փորձարարական վեպի մի տեսակ, որը չունի այուժե, կանխորոշված չէ վերջաբանը, բացակայում են նկարագրությունները, շեշտադրվում է երկխոսության տարրը:

7. Հետևելով Սերվանտեսի խրատական վեպերին՝ Ունամունոն ստեղծում է իրենը, որոնք առավել էքզիստենցիալիստական են: Մյուս կողմից, պետք է հավելել, որ Ունամունոյի խրատական նովելները կարող են ընկալվել ոչ միայն իբրև նիվոլաներ, այլև փոքր ծավալի վեպեր, իսկ ահա վեպը նույնպես կարող է ունենալ տարբեր ընկալումներ՝

1. Վեպն իբրև գրական ժանր

2. Վեպն իբրև նիվոլա, որը սովորական վեպ չէ, քանի որ ունի ներքին, իրական, հավերժական, հոգեվարքային իրականություն

3. Վեպն իբրև կյանք, քանի որ վեպ գրողն առաջին հերթին գրում է իր մասին, իր կյանքի պատմությունը:

8. Ունամունոն տարբերակում է դնում *ցանկանալ լինելու* և *ցանկանալ չլինելու* կամ *չցանկանալ լինելու* և *չցանկանալ չլինելու* գաղափարների միջև՝ դրանք համադրելով հավատացյալի և աթեիստի՝ հավատալու և չհավատալու գաղափարներով: Հավատացյալը հավատում է, որ Աստված գոյություն ունի, իսկ աթեիստը՝ որ գոյություն չունի, ստացվում է՝ երկուսն էլ հավատում են, կնշանակի՝ երկուսն էլ հավատացյալ են: Իսկ նա, ով ցանկանում է չլինել՝ լինելով է ցանկանում:

Հետևաբար՝

1. Հավատալ, որ...

2. Չհավատալ, որ...

3. Հավատալ, որչ...

4. Չհավատալ, որ չ...

համապատասխանաբար՝

1. Ցանկանալ լինել
2. Ցանկանալ չլինել
3. Չցանկանալ լինել
4. Չցանկանալ չլինել

Նույն ձևով Ունամունոն առաջարկում է մարդու մեջ ապրող հազարավոր «ես»-երից տարանջատել չորս հիմնական «ես»-եր.

1. Ես այնպիսին եմ, ինչպիսին՝ ուրիշները տեսնում են ինձ
2. Ես այնպիսին եմ, ինչպիսին ձգտում եմ լինել, որպեսզի ուրիշներն այդպիսին տեսնեն ինձ
3. Ես այնպիսին եմ, ինչպիսին՝ կարծում եմ, թե այդպիսին եմ
4. Ես այնպիսին եմ, ինչպիսին որ իրականում կամ:

Ստացվում է՝ «ես»-երից ցանկացածի այս կամ այն ձևով ընկալումը կախված է դիմացինի երևակայության, գիտակցության և իր սեփական մտապատկերում քո կերպարը, քո «ես»-ն իր ձևով պատկերացնելու և վերակերտելու կերպից: «Դոն Սանդալիոն» շախմատ խաղացողը՝ նիվոլայի հեղինակը հանկարծ գիտակցում է, որ կարոտում է ոչ թե այն Սանդալիոյին, ինչպիսին, որ նրան ընկալում են մյուսները, այլ այն մյուսին, որի կերպարը կերտել է իր ձևով, իր ներսում, իր մտապատկերում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Միգել դե Ունամունոյի փիլիսոփայական և գեղագիտական կոնցեպցիաները, «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում-2015», Երևան, ԵՂՀ հրատ., 2015, էջ 226-231:
2. Փիլիսոփայական վեպի կառուցման սկզբունքներն ու առանձնահատկություններն ըստ Միգել դե Ունամունոյի, «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում-2015», Երևան, ԵՂՀ հրատ., 2015, էջ 209-216:
3. Կյանքի և ճակատագրի ողբերգականությունը Միգել դե Ունամունոյի «Մառախուղը» նիվոլայում, «Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ», Երևան, Լինգվա, ԵՊԼՀ, 2016, էջ 302-308:
4. Քրիստոնեության հոգեվարքը և խրատական երեք նովել /Նախաբանը և թարգմանությունը՝ Ռ. Պետրոսյանի/ «ԳԱՄ», Երևան, Անտարես, 2016, էջ 5-12:

ПЕТРОСЯН РУЗАННА АРШАКОВНА ФИЛОСОВСКАЯ ПРОЗА УНАМУНО

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01. 07 – 'Зарубежная литература'.

Защита диссертации состоится 10-го июня 2016 г., в 14:00 на заседании специализированного совета ВАК 003 Армянской и зарубежной литературы имени М. Абегяна НАН РА по адресу: ул. Григора Лусаворича 15, г. Ереван, 0002, Республика Армения.

РЕЗЮМЕ

Работа посвящена исследованию философской прозы выдающегося писателя философа Мигеля де Унамуно.

В работе подробно рассмотрено философское и эстетическое восприятие писателя, показаны особенности его творческого пути; основным материалом исследования послужили его прозаические произведения: эссе, ниволы и романы.

Для комплексного исследования философской прозы Унамуно была сделана попытка рассмотреть ее основные аспекты, а именно: манеру письма, стилистические средства, к которым прибегает писатель, методы, на которые опирается, и, наконец, само содержание текста, то есть уделено внимание равно как форме, так и контенту исследуемого материала.

Задача диссертации – выявить особенности прозы, в частности жанра «ниволы» как философского романа Мигеля де Унамуно, опираясь на экзистенциальную философию или «философию существования», учитывая социально-политические, культурные события, философские и научные открытия данной эпохи.

Армянская критика не обращалась к исследованию философской прозы Мигеля де Унамуно. В этом смысле выбранную тему диссертации можно считать актуальной. Впервые армянскому читателю дается возможность ознакомиться с подробным теоретическим и идейным анализом творчества Мигеля де Унамуно, в особенности философской прозы – эссе, романов, нивол, благодаря чему достигается целостность системы представления об испаноязычном философском романе.

Нами была сделана попытка выявить общие особенности философской прозы и экзистенциального мышления Мигеля де Унамуно, опираясь на работы и статьи ряда испанских литературоведов и литературных критиков.

Работа состоит из введения, 3-х глав, заключения и списка использованной литературы.

В первой главе («Литературно-философская концепция Мигеля де Унамуно») показаны особенности философской прозы писателя. Принимая в основу религиозное и экзистенциальное восприятие писателя, обращаемся также к эстетической концепции последнего, к задачам искусства, разнообразию литературных жанров.

Являясь логическим продолжением предыдущей главы, вторая глава «раскрывает» философскую концепцию писателя с опорой на созданный самим писателем новый жанр романа, названный «нивола».

В третьей главе диссертации исследуются почти все романы Унамуну, которые можно считать в той или иной степени философскими, причем исследование данных романов осуществляется с учетом противостояния веры и атеизма, точной науки и абстрактной философии, чувства и разума, жизни и смерти.

В процессе исследования приходим к следующим выводам:

1. Унамуну – писатель противоречий. Его философские эссе построены на контрастах. Прозе Унамуну присущи также повторы: по его мнению, писатель чем больше пишет, тем больше повторяет сам себя. Однако важно, чтобы писатель смог показать собственную трагедию; нельзя забывать, как утверждает Унамуну, что каждый из нас – отдельная трагедия.

2. Исследуя религиозно-философские романы и ниволы «Жизнь Дон Кихота и Санчо» (1905), «Агония христианства» (1924), «Туман» (1914), «Авель Санчес» (1917), «Святой Мануэль Добрый, мученик», «Дон Сандалио, играющий в шахматы» (1930), можно прийти к выводу: в основе философии Унамуну лежит религиозный экзистенциализм, или религия как таковая. Предметом философского изучения Унамуну является конкретный человек, которого сам автор именует «человеком из мяса и кости», идею которого заимствует у Кьеркегора, в свою очередь говорящего о «конкретном», «частном» человеке.

3. В произведениях Унамуну можно встретить имена многих философов и богословов: Кьеркегора, Паскаля, Святого Августина, Декарта, Спинозы, Канта, Гегеля. Писатель читает всех, однако выделяет приемлемую для себя ту или иную идею, не принимает никакую и в том числе философскую систему, так как убежден, что система убивает, разрушает.

4. Мыслителей Унамуну и Кьеркегора объединяет экзистенциальное понятие отчаяния, неотделимого от человека, но выходу из которого способствует вера. Как для русского классика Льва Толстого, так и для Унамуну истинная религия – христианство, а высшая цель веры – познать Христа.

5. Как в философии, так и в искусстве Унамуну интересует только страдающий человек, искусство помогает человеку осознать и принять трагедию другого. Главная функция искусства – научить видеть красоту. Самое прекрасное в искусстве – поэзия; существенен язык, который, по Унамуну, является привилегией мужчины. Среди видов искусства писатель отдает предпочтение живописи, фигуративному искусству, архитектуре, а к музыке обращается настолько, насколько видит ее в поэзии.

6. Наилучший жанр для выражения философского мышления Унамуну – это философский роман, названный писателем «нивола», в котором переплетаются философское мышление и художественная проза. Унамуну является автором термина «нивола», однако сам термин не имеет перевода. Этим жанром романа писатель ломает приемлемые для данной эпохи литературные законы, создав тип экспериментального романа, не имеющего сюжета, где не

предрешено (предусмотрено) заключение, отсутствуют описания, акцентирован элемент диалога.

7. Последователь назидательного романа Сервантеса, Унамуну, создает свою, прозу, имеющую более экзистенциальное наполнение. Назидательные новеллы Унамуну могут быть восприняты не только как ниволы, но и как небольшие романы, а сам роман также может иметь разное восприятие:

1. Роман как литературный жанр
2. Роман как нивола, являющийся не обычным романом, поскольку в нем имеется внутренняя, действительная, вечная, агоническая действительность.
3. Роман как жизнь, поскольку создающий роман в первую очередь пишет о себе, воссоздает историю своей жизни.

8. Унамуну ставит различия между понятиями: *желание быть* и *желание не быть*, или *нежелание быть* и *нежелание не быть*, сопоставив их с понятиями *верующий и атеист, вера и неверие*. Верующий верит, что Бог существует, а атеист – что Бога не существует, получается, оба верят, следовательно, оба верующие. А тот, кто *желает не быть*, желает *будучи*.

Следовательно:

1. Верить в то, что...
2. Не верить в то, что...
3. Верить в то, что не...
4. Не верить в то, что не...

Соответственно:

1. Желать быть
2. Желать не быть
3. Не желать быть
4. Не желать не быть

Таким же образом Унамуну предлагает из многочисленных существующих в человеке «Я» отделить четыре основных «Я»:

1. Я таков, каким меня видят другие
2. Я таков, каким стремлюсь быть, чтобы другие меня видели таковым.
3. Я таков, каковым кажусь себе.
4. Я таков, каков я есть в действительности.

RUZANNA ARSHAK PETROSYAN

UNAMUNO' S PHILOSOPHICAL PROSE

Dissertation for obtaining the scientific degree of candidate of Philological Sciences, in the specialty of "Foreign Literature"(Specialty Code 10. 01. 07).

The defense of the dissertation is scheduled for 10 June 2016, at 14:00 pm, at the meeting of the Specialized Council of Armenian and Foreign Literature 003 of the Institute of Literature after M. Abeghyan, NAS RA. address: 15 Grigor Lusavorich str. 0002, Yerevan, Republic of Armenia.

SUMMARY

The present work is dedicated to the investigation of the 20th century famous Spanish writer and philosopher Miguel de Unamuno's philosophical prose. The research is a thorough study along the lines of Unamuno's philosophical and aesthetic perceptions, the peculiarities of the writer's creative life. The subject matter of the research is Unamuno's prose - essays, novelas and novels.

In order to carry a comprehensive analysis of Unamuno's philosophical prose, an attempt has been made to reveal some basic issues - how the author writes, what devices are mainly used and what he writes, that is to say the research equally focuses on both the form and content of the subject matter.

The object of the research is to reveal the peculiarities of the writer and philosopher Unamuno's prose and novela, as a philosophical novel, in particular, based on existentialism or philosophy of existence, taking into account the socio-political, philosophical, scientific and cultural conditions of that period.

Armenian critical mind has not touched upon the study of Miguel de Unamuno's philosophical prose at all. In this sense, the choice of the dissertation topic contributes to the topicality of the research. For the first time the Armenian reader has an opportunity to get acquainted with the thorough theoretical and ideological analysis of Miguel de Unamuno's works, particularly philosophical prose - essays, novels, novelas, which, in fact, contributes to the system of complete understanding of Spanish philosophical novel.

An attempt has been made to show the general features of Miguel de Unamuno's philosophical prose and existentialism, which are mentioned in a series of articles and scientific studies of Spanish literary critics.

The work consists of an introduction, three chapters, a conclusion and a bibliography.

In the first chapter ("Miguel de Unamuno's Literary-Philosophical Concept") the peculiarities of Unamuno's philosophical prose are presented based on the writer's perception of religious existentialism, with the reference to the aesthetic concepts of the latter, art issues, diversity of literary genres.

The second chapter is the logical continuation of the first one, which uncovers the philosophical issues raised in the first chapter, the answers to which are given in the new genre of the novel called "novela" created personally by the author. By this the writer makes a clear distinction between the concepts of novel and novela,

and presents the novel "The Fog" as the uppermost example of nivola, which he calls his "novel of all novels" or the biggest nivola.

In the third chapter of the dissertation almost all the novels by Unamuno, which are more or less philosophical, are examined. Moreover, the study of the novels is carried out based on the controversies of faith and atheism, science and true philosophy, emotion and intellect, life and death, etc.

During the investigation we came to the following conclusions:

1. Unamuno is a writer of controversies. His philosophical essays and novels are built on controversies. Repetition is typical to Unamuno's prose, according to the writer, the more a writer writes the more he repeats. But it is important that the writer be able to demonstrate his personal tragedy; we should not forget that, according to the writer, each of us is an individual tragedy.

2. Studying Unamuno's religious-philosophical novels and novelas "Don Quixote's and Sancho's Life" (1905), "The Agony of Christianity" (1924), "The Fog" (1914), "Abel Sanchez" (1917), "Saint Manuel - the Good Martyr", "Don Sandalio - the Chess Player" (1930), we can conclude that the underlying philosophy of the writer is religious existentialism or religion. The object of Unamuno's philosophy is the man, whom he calls "of flesh and bones", the idea of which he takes from Kjerkegor, who in his turn speaks of a "private" or "concrete" man.

3. In Unamuno's works we come across names of a number of philosophers and theologians, like Kjerkegor, Pascal, St. Augustine, Descartes, Spinoza, Kant, Hegel. The writer cites them all, but separates this or that idea from each acceptable to him, he does not accept a single philosophical system, because he is convinced that the system kills, distorts.

4. The idea of despair, which is inseparable from the man, but from which it is possible to be saved through faith unites such thinkers as Unamuno-Kjerkegor. Both for Unamuno and Tolstoy the true religion is Christianity and the higher purpose of belief is to know Christ.

5. In philosophy, as well as in art, only the suffering man interests Unamuno, the art helps people to understand and accept the other's tragedy. The main function of art is teaching to see the beauty. Amongst arts the most beautiful is poetry; language is important, which according to the writer is a man's prerogative. Amongst art forms the writer prefers painting, figurative art, architecture; he refers to music to the extent that he sees it in poetry.

6. The best genre of expressing Unamuno's philosophical thinking is the philosophical novel, which the writer calls nivola, which combines philosophical thinking and literary prose. The author of the term "Nivola" is Unamuno, and the term has no translation. With this genre of the novel the writer breaks the accepted literary rules of the time by putting forward a kind of experimental novel which has no plot, the epilogue is not defined, there are no descriptions, and the emphasis is on the dialogic element.

7. Following Cervantes's sententious novels, Unamuno creates his own ones, which are more existential. Unamuno's sententious novels can be perceived not only as novelas, but also as minor novels, and the novel itself can have different perceptions:

1. The novel as a literary genre

2. The novel as a nivola, which is not an ordinary novel, as it has an internal, real, eternal, agonistic reality

3. The novel as life, as the writer of a novel first writes about himself, his own life story.

8. Unamuno distinguishes between the ideas of *wanting to be* and *wanting not to be* or *not wanting to be* and *not wanting not to be* comparing them with the ideas of believing and not believing of the Believer and the Atheist. The Believer believes that God exists, and the Atheist believes that God does not exist, thus, it turns out that they both believe, it means they are both religious. And anyone who wants not to be wants it by being.

Therefore,

1. To believe that ...
2. Not to believe that ...
3. To believe that no ...
4. Not to believe that no...

Respectively,

1. To wish to be
2. To wish not to be
3. To refuse to be
4. To refuse not to be

Similarly Unamuno suggests separating the four main 'I'-s from the thousands of 'I'-s.

1. I am the way the others see me
2. I am what I am trying to be, for the others to see me that way
3. I am the way I think that I am
4. I am the way I really am.